

**"Մելլաթ Բանկ" ՓԲԸ-ն, ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, տրամադրում է ուսման վարկեր հետևյալ պայմաններով՝**

<b>Վարկի պայմանները</b>	
<b>Արժույթ</b>	ՀՀ դրամ
<b>Տարեկան անվանական տոկոսադրույք</b>	17-18 տոկոս
Տարեկան փաստացի տոկոսադրույք	19.9%-24%
<b>Ժամկետ</b>	24 ամիս /ամեն փուլի ժամկետը/
<b>Վարկի առավելագույն գումար</b>	800,000 ՀՀ դրամ, ոչ ավել քան ուսումնական տարվա վարձավճարը
<b>Վարկի տրամադրման եղանակ</b>	Միանվագ և/կամ փուլերով, անկանխիկ փոխանցվում է ուսումնական հաստատության համապատասխան հաշվին
	Փոխանցման դեպքում փոխանցվող գումարի 0.1 % չափով, Բայց որ ավել քան 5,000 ՀՀ դրամ
<b>Մարման եղանակ</b>	Անուիտետային եղանակով կամ զսպանակաձև / ամսական մարումներով
<b>Վարկի նվազագույն գումար</b>	100,000 ՀՀ դրամ
<b>Վարկի նվազագույն ժամկետ</b>	3 ամիս
<b>Բանկի միջնորդավճարներ</b>	
<b>Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար</b>	10,000 ՀՀ դրամ
<b>Ապահովվածություն</b>	
<b>Ապահովվածություն</b>	Վարկառուի եկամուտները /ներառյալ ընտանիքի անդամների եկամուտները/, անհրաժեշտության դեպքում՝ այլ անձի երաշխավորություն
<b>Տույժեր</b>	
<b>Ժամկետանց վարկ</b>	ուշագման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի տարեկան 12% տոկոսի հաշվարկով
<b>Ժամկետանց տոկոս</b>	ուշագման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի տարեկան 12% տոկոսի
<b>Վաղաժամկետ մարման տույժ</b>	Չի հաշվարկվում

**Սպառողական վարկերի ձևակերպման վայրը բանկն է:**

Ուսման վարկերը տրամադրվում են փաստաթղթավորված կամ վերլուծությամբ հիմնավորված եկամուտ ունեցող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, պետական կամ պետական հավատարմագրություն ունեցող ուսումնական հաստատությունների ուսանողների ուսման վարձերը մասնակի կամ ամբողջությամբ վճարելու նպատակով: /Ուսումնական հաստատությունների ցանկը հրապարակված է [www.edu.am](http://www.edu.am) կայքում /:

<b>Վարկը տրամադրվում է եթե</b>
1. Վարկառուն չունի ժամկետանց պարտավորություններ, վերջին երեք տարիների ընթացքում ունեցել է դրական վարկային պատմություն:
2. Վարկառուն ապահովված է աշխատանքով, որը հավաստվում է աշխատանքի վայրից համապատասխան տեղեկանքով և/կամ բանկի կողմից ընդունելի եկամուտ հիմնավորող այլ փաստաթղթով:
3. Վարկառուի բոլոր վարկերի գծով ամսական վճարումները / ամսական զուտ եկամուտ հարաբերակցությունը չպետք է գերազանցի 70

տոկոսը:

4. Որպես եկամուտ հնարավոր է դիտարկել նաև վարկառուի տան անդամների եկամուտները նվազեցված վերջիններիս ծախսերը:

Եթե վարկառուն չի համապատասխանում վերը նշված պայմանների 3-րդ կետին՝ կարող է պահանջվել առնվազն մեկ անձի երաշխավորություն:

2. Ուսման վարկի վարկառու կարող է հանդիսանալ 18 տարին լրացած ուսումնական հաստատության ուսանողը, նրա ծնողները, ամուսինը, քույրերը, եղբայրները:

3. Վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելու ժամկետը վերջնական փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը որոշման մասին հաճախորդին տեղեկացնում է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը վարկառուին տրամադրվում է պայմանագրով նախատեսված ապահովման պայմանագրերի կնքված լինելու դեպքում:

**Ուսանողական վարկի տրամադրման համար հաճախորդը պետք է Քանկ ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.**

- 1.Վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ,
- 2.Վարկառուի աշխատանքի վայրից տեղեկանք՝ աշխատավարձի չափը և գրանցման ամսաթիվը պարտադիր է /առնվազ 3 ամսվա գրանցված աշխատող/,
- 3.Հանրային ծառայությունների համարանիշ,
- 4.Ուսանողի անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
- 5.Տեղեկանք ուսումնական հաստատությունից, որում պետք է նշված լինի ուսանողի անուն ազգանունը, ֆակուլտետը և կուրսը, ուսանողի կիսամյակային/տարեկան վարձի չափը, ուսումնական հաստատության բանկային հաշվի ռեկվիզիտները:
6. Տեղեկանք բնակության վայրից:
- 7.Այն դեպքում, երբ պահանջվում է երաշխավորություն, ներկայացվում է երաշխավորի անձը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի վայրից տեղեկանք:

**Տոկոսագումարի հաշվարկման կարգ**

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎՎ՝ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՓԱՏՍԱՑԻ ՄԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՎԱՐԿԻ ԱՐԺՈՒՅԹՈՎ: ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ 365 ՕՐ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՏԱՐԻՆ:

Օրինակ  
 Վարկի մնացորդ՝ 1.000.000 ՀՀ դրամ  
 Վարկի տարեկան տոկոսադրույք՝ 15 %  
 Օրական տոկոսագումարի հաշվարկ՝  $1.000.000 * 15\% / 365 = 410.96$

Տրամադրված վարկերի համար անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում:

**Փաստացի տոկոսադրույքի հաշվարկ**

Համաձայն “Սպառողական կրեդիտավորման մասին “ ՀՀ օրենքի, հաշվարկվում է նաև տարեկան փաստացի տոկոսադրույք՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով և հաշվարկված հետևյալ բանաձևով

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

- որտեղ՝
- i- տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).
  - A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը).
  - n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը.
  - N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.
  - Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.
  - Dn –կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.
  - i –ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Օրինակ. Տրամադրվել է սպառողական վարկ 500.000 դրամի չափով, 20 տոկոս տարեկան տոկոսադրույքով, 1 տարի մարման ժամկետով, մարումները ամենամսյա հավասարաչափ մարումներ՝ վարկ և տոկոս ամսեկան միևնույն գումարը: Փաստացի տարեկան տոկոսադրույքը այս դեպքում կազմում է 21.94%:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՏՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:**

**Վարկառուի կողմից Վարկառուի վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում, բանկը իրավասու է բռնագանձում տարածել վարկառուի գույքի վրա:**

. **ՁԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ: ՁԵՐ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՍ**

### **Տեղեկացում**

**«Մեյլաթ Բանկ» ՓԲԸ-ն նախքան վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգ 8/05-ի:**